Ն. Բ. ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ

ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՆԵՐՍԵՍ ԱՇՏԱՐԱԿԵՑՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ

Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միակցման պրոբլեմի ուսումնասիրությունը գիտական հիմքի վրա դրվելուց տակավին շատ առաջ, հայ ժողովրդի պատմության անկյունադարձային այդ իրողության գնահատականը տալու սակավ փորձեր չեն եղել։ Հասարակական-քաղաքական ու դասակարգային ուրույն շահախնդրություններից լիցքավորված՝ նախահեղափոխական հեղինակներից շատերը պրոբլեմի գնահատման ընդհանուր հետնախորքի վրա աշխատել են բնութագրել հայ ազատագրական շարժման գործիչների օրիենտացիան ու գործելակերպը։ Անցյալի պատմական ուսումնասիրողներին առավել հետաքրքրել է ժամանակի հայ գործիչների կենտրոնական դեմքերից մեկը՝ Ներսես Աշտարակեցին։

Արդ՝ սույն հոդվածի նպատակն է ցույց տալ, թե պատմագրության մեջ ինչպես է լուսաբանվել Ն. Աշտարակեցու վերելքի ու վայրէջքի առանձին կողմերը, նրա ակնկալությունների և ցարիզմի հետամտած նպատակների ներհակությունը, վերջապես՝ միջավայրի ու ժամանակի հետ հարմարվող նրա անձնավորության դասակարգային երեսը։ Կամենալով կատարել այդ, նպատակ չունենք լիովին սպառել հայ պատմագրության մեջ հայտնված կարծիքների մանրամասն ու համապարփակ վերլուծությունը, այլ կբավարարվենք Ներսեսի կյանքի ու գործունեության արժեքավորման շուրջը եղած հիմնական տեսակետների քննությամբ միայն։

Նախահեղափոխական հայ պատմագրության մեջ Ն. Աշտարակեցու գործունեությանը անհամեմատ լայն տեղ է հատկացրել Ալեքսանդր Երիցյանը։ Հայ ազատագրական շարժման սակավ այն գործիչներից էր Աշտարակեցին, որոնք ժամանակի «անպատեհության» համար չէին նվնվում ու անիրական համարում վայրկյանը, իսկ պատմական վայրկյանը Երիցյան պատմաբանի համար XIX դարի սկիզբն էր, որի շեմին հայ ժողովուրդը կանգնած էր օտար բռնակալության շղթաները ոտքերին։

Պատմական ճակատագրի անողոք օրենքով իր քաղաքական անկախությունը կորցրած հայ ժողովրդի կյանքի, հետամնաց ավատական կարգերի, թուրքական ու պարսկական տիրապետության տակ հայ ժողովրդի ֆիզիկական ու բարոյական խեղխեղումների մասին բազում փաստեր է բերում Ալեքսանդր Երիցյանը։ Երիցյանի մոտ հայ ազատագրական շարժման ղեկը ստանձնած գործիչը հայրենիքի փրկության ուղիները սպասում է ոչ թե անցյալի հերոսների աճյունացած ոսկորների «կենսաձիր» լույսից, այլ հին դյուցազունների իրօրյա ժառանգորդներից, որ կենդանություն են տալիս ժողովրդին ու հայրենիքին։ Դարերի մշուշապատ հեռավորությունից եկող հայ

ազատագրական լեգենդի մասին գաղափարը 1826 թ. սկսված ռուս-պարսկական պատերազմի շնորհիվ մարմին էր առել։ Իբրև ակնկալություններով ու հույսերով ապրող անդրկովկասյան հայերի քաղաքական առաջնորդ, Աշտարակեցին մարտական հորդորներ էր կարդում և կոչեր արձակում ժամանակակիցներին, ոգեշնչում նրանց, թե մոտալուտ է հայրենի երկրի գարունը, «Հասավ ժամը, երբ աչքով պիտի տեսնենք Արարատյան աշխարհի և հայոց ազգի ազատությունը. հասավ ժամը, երբ Մայր Աթոռը պիտի վերականգնե իր վաղեմի անկախությունը. ոտքի կանգնե՛ք, հայոց քաջեր, թոթափեցեք Պարսից լուծը, ուրախացրեք ալեզարդ Մասիսին, մի անգամ արյունով ներկեցեք, հայրենի հողերը ու ապա ապրեցեք ազատ... ժամ է արդեն, օ՜ն անդր... հիմա՜—կամ երբե՜ք»[1]։

Այդ պահին երերուն չէր Աշտարակեցու գործունեության հասարակական պատվանդանը։ Անցած ուղու իր վերելքի շրջանում Աշտարակեցին գործեց հավատարմությամբ և ինքնամերժ նվիրումով, նա համաժողովրդական մեծարանքի էր արժանացել՝ իբրև ազատագրական շարժման ճանաչված ղեկավար։ «Համաժողովրդական է այն շարժումը,—գրում է Լենինը,—որն արտահայտում է ամբողջ երկրի օբյեկտիվ կարիքները... Համաժողովրդական է այն շարժումը, որը պաշտպանվում է բնակչության վիթխարի մեծամասնության համակրանքով»[2]։

Անցյալ դարի 20-ական թվականներին Ներսես Աշտարակեցին ոչ այնքան մարմնացումն էր անձնական տենչանքի ու ձգտման, որքան խտացումը համաժողովրդական շարժման։ Նա արտահայտում էր Երիցյանի բառերով ասած՝ «Պարսից դարավոր բռնակալության» դեմ ազգային պատերազմի ելած արևելահայ ժողովրդի շահերը։ Ներսեսի հորդորներով էր, որ «...Կուրի եզերքից մինչև Արաքսի ափերը Հայք՝ հոգևորական և աշխարհական, կին և տղամարդ, մեծ ու փոքր ամենքը աշխատում էին մասնակից լինել այդ կռվին»[3]։

Դեռ այն օրերից մեկում, երբ շարունակվում էին որոտալ թնդանոթային համազարկերը և հաղթականորեն հնչում էին շեփորները, Թավրիզը գրավելուց հետո, գնդապետ Լազարյանի միջոցով Աշտարակեցին առաջարկներ էր անում Պասկևիչին՝ Ատրպատականից Արարատյան աշխարհ՝ հայերի ներգաղթման համար գալիք պայմանագրի մեջ հատուկ հոդված ներմուծելու մասին։ Ուշագրավ է Լազարյանի պատասխանը։ Մանրամասնորեն պարզելով իր տեսակետը Հայաստանի սահմաններն ընդարձակելու և այն պարսկահայերով ու արևմտահայերով բազմամարդ դարձնելու մասին, գնդապետը հայտնում էր, որ այդ տեսակետին իրազեկ է «կացուցել» Պասկևիչին, հաշտության բանակցությունների ժամանակ նկատի ունենալու համար. «Զոր ինչ գրնալ էիք ինձ վասն սիրելի մեր ազգին և սահմանաց Երևանու՝ ես նորին բարձր գերազանցութեան վասն այս խոսեալ եմ, որ ասաց ինձ թե՝ միտքն ու դիտաւորութիւնն իւր կայսերական մեծութեան նոյն է. նա ես ինքն նորին բարձր գերազանցութիւնն հետևելոց է այս բանին լաւապէս կատարել։ Եւ ես

---

1 Ալ. Երիցյան, Ամենայն Հայոց կաթողիկոսությունը և Կովկասի հայք 19-րդ դարում, մասն Ա, Թիֆլիս, 1894, էջ 268—269։

2 В. И. Ленин, ПСС, т. 22, стр. 283.

3 Ալ. Երիցյան, նշվ. աշխ., էջ 257։

իմոյս կողմանէ ինձ առաջին և սուրբ պարտաւորութիւն կը համարիմ, այն է՝ որ լինիմ օգուտ ազգին մերոյ»[4]։

Մինչսովետական հայ պատմագրության մեջ, այժմ էլ ընդունելի, այն միտքն է հայտնվել, թե Ն. Աշտարակեցու քաղաքական բեմելը պատահականություն չէր։ «...Երբ ժամանակը իր անողոք պահանջներն էր ներկայացնում հայերին, երբ ռուսաց տիրապետությունը նոր, ժպտուն հորիզոններ էր բաց անում, մեր հոգևորականության մեջ երևան եկավ մի նոր հերոս, որ հաջորդեց Հովսեփ Արղությանին և շարունակեց նրա գործը ավելի մեծ եռանդով»[5],—գրում է Լեոն։ Հիրավի։ Ռուսաստանի առաջխաղացման «ժպտուն հորիզոններիս» հետ կապելով հայ ժողովրդի ազատագրական բաղձանքները, Աշտարակեցին հույս ուներ, թե հայ ժողովուրդը ձեռք կբերի քաղաքական ինքնուրույնություն, մանավանդ, որ ցարիզմը ինչպես նախորդ դարում, հիմա ևս հայտարարում էր, որ Անդրկովկասի նվաճմամբ ինքը հետամուտ է հավատակից ժողովուրդների ազատագրմանը։ Անտեսելով ցարիզմի անդրկովկասյան քաղաքականության մեջ տակավին XVIII դ. վերջերից դրսևորվող բացարձակ գաղութակալության տենդենցները, Ալ. Երիցյանը ջանում է ընդհանրացնել Ն. Աշտարակեցու գործունեության տարբեր շրջանները հատկանշող մոմենտները։ Երիցյանի մոտ Ն. Աշտարակեցին ազատ է տրամադրությունների ու մտքերի հակասություններից. քաղաքականության հարցերում դեռևս երևրուն վարդապետը (մենք նկատի ունենք նրա կապերը ֆրանսիացիների և վրաց թագաժառանգի հետ) նույնացված է ռուսական օրիենտացիայի հաղթանակի համար մարտնչող արքեպիսկոպոսի հետ՝ նրան վերագրելով ամեն տեսակ ձգտումներ։ Նման մտայնությունը հատուկ էր ոչ միայն Երիցյանին։ Հայ ազատագրական շարժումների պատմությունը 70—90-ական թվականների մարդիկ շատ քիչ գիտեին ընդհանրապես։ «...Նրանք գիտեին,— գրում է Աշ. Հովհաննիսյանը,—որ Ցարական Ռուսաստանը ազատել էր հայերին ֆիզիկական բնաջնջումից և տվել նրանց տնտեսական ու կուլտուրական զարգացման շոշափելի հնարավորություններ։ Սակայն մոռացել էին դրեթե, թե ինչի էին ձգտել հայ ղեկավարները. և ինչ ստացել փաստապես»[6]։ Բարեբախտաբար հետագայում սկսում են հաղթահարվել նման պատկերացումները։ Ցարիզմի հետամտած նպատակների և նրա գաղութային քաղաքականության քիչ թե շատ մտաոու ուսումնասիրողները հանգում են այն եզրակացության, որ անմիտ ու անարժեք է բարոյական բարբառը այնտեղ, ուր երևույթների գնահատության եզակի կշռաչափը շահախնդրական միտումներն են, իսկ վերջիններիս իրականացնողները ռուս զինվորականների փայլատակող սուրը։ Ցարական սատրապները մոռացության տալով իրենց երբեմնի խոստումները, բռնում են դրանց դրժելու և իրենց սևիական ծրագիրն իրականացնելու ուղի։

Իրական հողից կտրված պիտի համարել Գյուտ քահանա Աղանյանի այն կարծիքը, ըստ որի Աշտարակեցի քաղաքական գործչին ոգևորող ու եռանդ ներարկողը փառասիրությունն ու բարձրանալու տենչն էր, այն աստիճան,

---

4 Մատենադարան, Ն. Աշտարակեցու արխիվ, թղթ. 166, վավ. 822։

5 Լեո, Ստ. Նազարյանց, հ. I, Թիֆլիս, 1902, էջ 10։

6 Տե՛ս Աշ. Հովհաննիսյանի հոդվածը «Պատմա-բանասիրական հանդես»-ի 1959 թ. № 4-ում, էջ 285։

որ իբր «նա ամենևին չէր հոգում, եթե կատարվեր այդ ազգի խայտառակության և Աթոռի ավերման գնով»[7]։ Աղանյանը բազմիցս այն տեսակետն է հայտնել, որ հայ ազատագրական շարժման գործիչները չհասկանալով ռուսական պետության խոստումների իսկական լեյտմոտիվը՝ «...նվաճելու հայկական նահանգները և մահմեդական տիրապետության փոխարեն իր իշխանությունը հաստատելու այդ երկրում», իզուր գործիք եղան ռուսաց ձեռքին՝ նրանց այդ նպատակին հասնելու համար[8]։ Եթե հայ ժողովրդի մեծ մասը «անգիտակցաբար» ռուսի տիրապետության ձգտումների մեջ աշխարհակալական ցանկություններ չէր տեսնում, այլ քրիստոնյաներին բարբարոսների ճիրաններից ազատելու մի վեհ գաղափար,—շարունակում է հեղինակը,—ապա չի կարելի նույնն ասել նրանց մասին, ովքեր ղեկավարում էին ժողովրդին և նրա ձգտումների կատարմանը նպաստում։ Նրանք բոլորը՝ սկսած Սփրեմ արքեպիսկոպոսից մինչև «այդ ամենի գլխավոր գործակատար» Ներսես Աշտարակեցին, չխնայեցին իրենց նյութական և բարոյական աջակցությունը և իշխանական ուժը այդ ցանկությունն ի կատար ածելու համար»[9]։

Հարկավ, Աղանյանը անտես էր առնում ցարիզմի դասակարգային էությունն ու հայ ազատագրական շարժման առաջմղիչ ուժերի նպատակները։ Նա մոռանում էր, որ Անդրկովկասը գրավում էր կալվածատիրական Ռուսաստանը և, հետևաբար, ռուս ազնվականության ու նորելուկ բուրժուազիայի շահերի պաշտպան ցարիզմը խտրություն չպիտի դներ նպատակին հասնելու միջոցների առջև։

Բուրժուական պատմագրության ներկայացուցիչներից ոմանք չեն կարողանում ազատվել իրենց դասակարգային նեղմտությունից։ Այսպես։ Դարասկզբի հայ ռեակցիոն պահպանողական մտավորականության ձայնատար Գեղամյանը, որն անտարբեր չէր դեպի հայ կյանքն ու նրա խնդիրները և արձագանքում էր ազգը հուզող հարցերին ազգապաշտպանության կղերական դիրքերից, այդ նեղմտությունից էլ գրչահարում էր ցարիզմի հինօրյա քաղաքականությունը և նրա հաջողության երթը դյուրացնող հայ գործիչներին։ Գեղամյանը պատգամում էր ժամանակակից իր ընթերցողներին «մի անգամ ընդմիշտ» հեռու մնալ «որևէ քաղաքական շարժումներից, քաղաքական գործերի և հաշիվների միջամտություններից և բոլոր սրտով ու հոգով» նվիրվել «քաղաքակրթական խաղաղ, շինարար աշխատանքի»[10]։ Գեղամյանը աշխատում էր վարադուրել ազգային-քաղաքական իր իմաստասիրությունը և հակադեմոկրատական գաղափարախոսությունը երկդիմի տրտունջներով, նույնիսկ հայրենասիրության մասին նետված շատ զգուշավոր և միշտ քողարկված խրատներով։ Ժամանակի պահպանողական հայ շրջաններում հայտնի դառնալով իբրև դեմոկրատական հայացքների մոլի հակառակորդ, նա միշտ ասում էր, որ ինքը չի կարող ձայնակցել ռուսական օրիենտացիան պաշտպանող հայ գործիչների ուղեգծին[11]։ Ըստ Եղիշե ք. Գեղամյանի, բոլոր

---

7 Գյուտ ք. Աղանյան, Դիվան Հայոց պատմության, հ. է. մ. 2, Թիֆլիս, 1909, էջ է—ԻԹ։

8 Նույն տեղում, էջ ԽԳ—ԽԴ։

9 Նույն տեղում։

10 Եղ. ք. Գեղամյան, Պատմության դասերը, Բաքու, 1915, էջ 34—35։

11 Տե՛ս Ա. Ք. Կարինյան, Բաֆֆին և նրա ռեակցիոն քննադատը հոդվածը, ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր», 1954, № 6։

հայ քաղաքական գործիչները, Ի. Օրուց մինչև Ներսես Աշտարակեցին և Լազարյան իշխանները, մեծամեծ զոհեր են մատուցել ռուսական դիվանագիտությանը և միշտ հուսախաբ եղել իրենց ակնկալությունների մեջ։

«Սրանով չենք ուզում ասել այժմ,—գրում է Գեղամյանը,—թե կառավարությունից որևէ փոխարինություն, պարտքի որևէ հատուցումն ենք պահանջում կամ խնդրում։

— Ո՛չ, քավ լիցի։

— Ընդհակառակը՝ շնորհակալ ենք կառավարությունից այն բարիքների համար, որ 75 տարի վայելել ենք նրա հովանու ներքո՝ ի տրիտուր մեր մատուցած մեծամեծ ծառայություններին։ Բայց եթե կառավարությունից որևէ պահանջ անելը մեզ իրավունք չենք համարում,—գոնե լիակատար իրավունք ենք համարում և բաց ճակատով միշտ կարող ենք պահանջել, որ կառավարությունը մեզ ազգովին ողջակեզ (ընդգծումը հեղինակինն է—Ն. Ս.) չբերե իր այն քաղաքական նպատակին, որ վերջին Արևելյան պատերազմից հետո սկսել է գործադրել մեզ վրա»[12]։

Անցյալ դարի 60-ական թվականներին, հայ ազգային-պահպանողական հոսանքի ներկայացուցիչ Մարկոս Աղաբեկյանը Աշտարակեցու հանցապարտությունը տեսնում էր այն բանում, որ նա անզոր գտնվեց ճարպկորեն օգտագործել բոլոր պարագաները իր ազգի օգտի համար։

Ներսեսի դիվանագիտական սխալն այն էր, գրում է Աղաբեկյանը, որ «Պասկևիչ, Կրասովսկի զորապետների խառնակության մեջ» չկարողացավ «ոչ մնալ անկախ այդ խառնակությունից և ոչ ընտրել այն կողմը, որից ավելի կարելի էր ազգային օգուտ քաղել»[13]։ «Ուսումն հայոց պատմության» ձեռագիր աշխատությունում Աղաբեկյանը զարգացնում է այն տեսակետը, թե հայերի ներգաղթման գործում ռուսներից առավել մեղավոր են հայ գործիչները։ Ըստ նրա, Ն. Աշտարակեցին կույր գործիք էր ռուսների ձեռքին, իսկ ցածրաստիճան որոշ հայ եկեղեցականներ, օրինակ, Ստեփաննոս եպիսկոպոսն ու Նիկողոս վարդապետը առանց հասկանալու կատարում էին նրա ցուցումները։ Եթե ներգաղթողները քաջ գիտենային, թե ինչ կյանք պիտի վարեն ռուսաց ամենաողորմած խաղաղարար դրոշակի ներքո, ոչ թե իրենք, այլ իրենց կատուներին անգամ թույլ չէին տալ տեղափոխվել Պարսկաստանից Ռուսաստան։ Բայց կրոնական և ազգային ազատություն ստանալու հույսը և ազատ քաղաքացիության իրավունք ունենալու տենչը և, ռուսների կողմից խոստացած արտոնությունները վայելելու ակնկալությունը հարկադրեցին նրանց անցնելու ռուսական նորագրավ երկրամասերը։ Դեպի Անդրկովկաս հայերի ներգաղթը ունեցավ այն հետևանքը, գրում է նա, որ «Հայաստանի ամենից լավ մասը» դատարկվեց[14]։

Նշելով ցարական կառավարության բռնությունները, հեղինակը ոչինչ չի ասում Թուրքիայում տիրող կարգերի մասին։ Ի դեպ, ցարական Ռուսաստանի Աղաբեկյանի քննադատությունն այն աստիճան միակողմանի և միտումնավոր

---

12 Ե ղ. բ. Գ ե ղ ա մ յ ա ն, Մտորումներ, «Հովիվ», 1906, № 39, էջ 618։

13 Մ. Ա ղ ա բ ե կ յ ա ն, Խնդիր կաթողիկոսության ամենայն հայոց..., Կ. Պոլիս, 1865, էջ 12։

14 Մատենադարան, Մ. Աղաբեկյանի արխիվ, «Ուսումն հայոց պատմության», դ. Գ, հ. 2, երես 1964—1971։

էր, որ Ռուսաստանում ոչինչ լավ բան չէր նշմարում հայերի տնտեսական-հասարակական ապագա զարգացման համար։

Ազգային-պահպանողական հրապարակախոսը լռությամբ է անցնում այն երևույթի կողքով, որ հայ ժողովրդի պատմության մեջ առաջին անգամ, այնուամենայնիվ Ռուսաստանի շնորհիվ, հայերը հակառակ էին գնում նվաճողների կողմից գարերով պարբերացված արտագաղթ կոչվող մեծագույն չարիքին։

Ի տարբերություն Գեղամյանի, Մ. Աղաբեկյանը Ն. Աշտարակեցուն ու նրա համախոհներին գյուրախաբ մարդիկ չի գիտում։ Ընդհակառակը, Աշտարակեցին և հայ ազատագրական շարժման նրա նախորդ բոլոր գործիչները լավ էին հասկանում ռուսական պետության նպատակները, նրա գեներալների «սուտ ու փուտ խոստումները, իրարու հակառակ հրամանները, բայց իրենց անձի բավականությունը կկուրացներ իրենց՝ վեղարի վրա խաչ, կրծքին վրա նշաններ, գրպաններում հոլանդական ոսկի...»[15]։

20-ական թվականների վերջերին, երբ Արևելյան Հայաստանը «Հայկական մարդ» հորջորջմամբ միակցվել էր Ռուսաստանին և այլևս պայմաններ չկային խաչեր ու նշաններ ձեռք բերելու համար, Աշտարակեցին շարունակում էր ազգային քաղաքական իր որդեգրած ուղեգիծը։ Տակավին «նա համոզված էր, թե հայերի ազատությունը ձեռք պիտի բերվի ռուս կառավարության շնորհիվ և այդ ակնկալությամբ ջանք չէր խնայում նորանվաճ երկրում զսպելու ցարական վարչության դեմ հայերի մեջ խմորվող տրտունջները ու բողոքները»[16]։ Տեղական նորեկ վարչության անիրավություններից սրտնեղված՝ մի կողմից նա բողոքներ էր հղում ցարական արքունիքի բարձրաստիճան պաշտոնյաներին, մյուս կողմից՝ հավաստիացնում ցարիզմի հայ կալանավորներին՝ հավատ ընծայել, չերկմտել կայսերական կառավարության արդարադատությանը[17]։

Թուրքական իր օրիենտացիան հիմնավորելու և Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միակցման իրողության հետադիմական կողմը դծելու համար Մ. Աղաբեկյանը ջանում է առանց հիմնավոր փաստարկման հավատացնել, որ Աշտարակեցին ու նրա գործակատարները չկարողացան թափանցել դարի սկզբին Պարսկաստանում կատարվող տնտեսական-քաղաքական և կուլտուրական «խոշոր» տեղաշարժերի էության մեջ։ Թագաժառանգ Աբբաս Միրզային նա ներկայացնում է իբրև «ներքին բարենորոգումների» մի ամբողջ սիստեմի հեղինակ, մեծ քաղաքագետ, «մահմեդական ամբոխի կրոնական հալածանքները» զսպող և «քրիստոնիաներուն» ավելի ուժ և սիրտ տալու ջերմ պաշտպան[18]։ Աղաբեկյանի համար պարսկական «հրաշքի» իսկական էությունը տակավին 1817 թ., Ալեքսանդր 1-ին հղած իր զեկուցագրում, բացահայտում էր Երմոլովը. «Աբբաս Միրզան, օժանդակություն ստանալով անգլիացիներից, ամենայն հաջողությամբ աչքի ընկնող բարենորոգումներ է անց

15 Մատենադարան, Մ. Աղաբեկյանի արխիվ, «Ուսումն հայոց պատմության», գ. Գ, հ. 2, երես 1961։

16 Աշ. Հովհաննիսյան, Նալբանդյանը և նրա ժամանակը, հ. Ա, Երևան, 1955, էջ 42։

17 Մատենադարան, Ն. Աշտարակեցու արխիվ, թղթ. 166, վավ. 572։

18 Մատենադարան, Մ. Աղարեկյանի արխիվ, «Ուսումն հայոց պատմության», գ. Գ, հ. 2, երես 1956։

կացնում»[19]։ Հարկավ, ռազմական գործի կանոնավորումը, որին ձեռնամուխ էր եղել պարսկական թագաժառանգը, ինչ որ չափով արտահայտություն էր երկրում կատարվող տնտեսական տեղաշարժերի։ Սակայն Աշտարակեցին և ռուսական կողմնորոշման նրա ժամանակակից սերունդը ավելի բանիմաց գտնվեց, ճիշտ հասկացավ գաղութային Անգլիայի օգնությամբ իրականացվող բարենորոգումների նպատակներն ու նրանց հետևանքները, քան հետագայում անգլիական ու ֆրանսիական քաղաքականության կողմը թեքված հեղինակը։ Նկարագրական չափազանցությունների մեթոդով գրված պատմագիտական իր երկասիրություններում խեղաթյուրելով անցյալը, Մ. Աղաբեկյանը լռելյայն անցավ իր տեսակետին աննպաստ փաստերի կողքով։ Դժվար թե նա չիմանար, օրինակ, որ քրիստոնյաների «ջերմ պաշտպան» Աբբաս Միրզայի ժամանակ էր հենց, որ էջմիածնի աթոռի պարտքը սարդարին 13 հազարից հասել էր 18 հազար թումանի[20]։ Համեմատությունն այն կշռաչափն էր, որով Մ. Աղաբեկյանը փորձում էր գնահատել ռուսահայերի, թուրքահայերի և պարսկահայերի ոչ միայն ներկան, այլև նրանց պատմության մերձավոր անցյալի մի քանի կողմերը։

Նույն ակունքից էր ելնում հայ խոշոր պատմավիպասան Ռաֆֆու վաղ շրջանի պատմահայեցողությունը։ Նրա կարծիքով, եթե չլիներ Ն. Աշտարակեցին ու գնդապետ Լազարյանը, ապա ուրիշ ընթացք կստանար արևելահայերի տնտեսական ու հասարակական-քաղաքական կյանքը։ «Հայոց պատմության ատյանում,—գրում է նա «Սալբի» առաջաբանում,—չեն կարող պարզ երեսներով երևալ երկու հայազգի անձինք.—մինը՝ մի հոյակապ և արժանի հիշատակի եկեղեցական ոմն, որ շատ ուշ հասկացավ յուր սխալը... մյուսը՝ մի փառասեր հայ աստիճանավոր ռուսաց զորքի մեջ, որ խաբվելով շքանշաններից, հազարավոր գերդաստաններ ձգեց ռուսաց խորամանկ քաղաքականության շղթաների մեջ և թողեց նրանց մաշվել՝ քսվելով մի հզոր տերության երկնաքարի տակ...»[21]։ Նման այն քննադատներին, որոնք հեռավոր կայծը՝ հրդեհի և հազի ձայնը թնդանոթի որոտմունքի տեղ են ընդունում, Ռաֆֆին, «Սալբի»-ն գրելու պահին նույնպես իդեալականացնում էր Պարսկաստանի այն ժամանակվա կացությունը։ Նա չափազանց գերագնահատում էր Աբբաս Միրզայի կողմից Պարսկաստանում կատարված աննշան տնտեսական և կուլտուրական ձեռնարկումները, որից հետո «Հայոց աշխատասիրության ոգին երևան հանեց յուր վառվռուն վաստակները»[22]։ Բարեբախտաբար Ռաֆֆին իր կարծիքին ընդմիշտ գերի չմնաց։ «Սալբիի» առաջաբանում ռուսական զենքի հաղթական երթին նպաստող հայ գործիչների ձեռնարկները մրող հեղինակը «Հարեմ»-ում գրում էր, որ անկախ Անդրկովկասում ցարիզմի վարած գաղութային քաղաքականությունից՝ «Վրացիները այլևս թագավորություն չունեն»[23], այնուամենայնիվ, Ռուսաստանը դրական դեր էր կատարում վրացիների և հայերի նկատմամբ, որովհետև «...Ռուսները մեզ նման քրիստոնյաներ են, նրանք գերի չեն առնում և պարսիկների նման չեն թալանում...»[24]։

---

19 Акты Кавказской археографической комиссии, VI, ч. 2, стр. 125.

20 Մատենադարան, Ն. Աշտարակեցու արխիվ, թղթ. 166, վավ. 589։

21 Ռ ա ֆ ֆ ի, Երկերի ժողովածու, հ. Ա, Երևան, 1962, էջ 57։

22 Նույն տեղում։

23 Նույն տեղում, էջ 459։

24 Նույն տեղում։

«Անհերքելի է,—գրում է Բաֆֆին 1879 թ. «Հայ երիտասարդությունը» աշխատության մեջ,—որ մեր մտավոր զարգացման և ռուսների մեջ կա մի ներքին կապ»[25]։

Անցյալի հայ հեղինակներից շատերն են ապրել Բաֆֆու մտածողության հակասական ընթացքը։ Այսպես, եթե վաղ շրջանում գրած իր հոդվածներում Ալ. Երիցյանը բացասաբար էր արժևքավորում Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միակցման իրողությունը, մինչդեռ 80—90-ական թվականների աշխատություններում՝ կամուրջում էր 60-ական թվականների լիբերալ հրապարակագրող Ստ. Նազարյանցին դարեվերջի լիբերալ պատմագրող Լեոյի հետ։ Ստեփանոս Նազարյանցը Արևելյան Հայաստանի միակցումը Ռուսաստանին մեծ բախտավորություն էր համարում։ Պարսկական բռնակալությունը նրա համար խավարի ու հետամնացության մարմնացում էր «ասիական անշարժության» ու բարբարոսության իսկական դրսևորում։ «Ժողովրդի հայրենիքը,—գրում էր նա,—այժմ ազատված է ստրկության լծից։ Նա կապակցված է մի Եվրոպական լուսավորություն ընդունող տերության հետ, ժողովրդի բոլոր իմացական զորությունքը կարող են այժմ ազատապես աճել և զորանալ։ Եվրոպան բաց ու արձակ է հայերի առջև, նոքա կարող են մասնակից լինել նորա կրթությանը և լուսավորությանը»[26]։ Լիբերալների նման Ալեքսանդր Երիցյանը 80—90-ական թվականներին Ռուսաստանն ընկալում էր իբրև մի ամբողջական երկիր՝ զերծ միջֆեոդալական ներքին խառնակություններից։ Նա գերադասում էր ռուսական օրենքներն ու պետական կարգերը, դրանք համեմատում արևելյան երկրների, մասնավորապես Պարսկաստանի ու Թուրքիայի օրենքների ու կարգերի հետ և մատնանշում Ռուսաստանի առավելությունները։ «Ներկա գարուս մեջ ոչ մի քաղաքական անցք այնքան նշանավոր չէ եղած հայ ազգի համար, որքան պարսկական խղճուկ գյուղի մեջ կայացված հիշյալ պայմանագիրը»[27]—գրում է նա 1828 թ. փետրվարի 10-ի Թուրքմենչայի պայմանագրի մասին։ «Պաշտպան հայրենյաց», «Ազատիչ ազգի», «Բարերար հայոց»,—այսպիսին է Աշտարակեցին Ալ. Երիցյանի պատմագիտական նոր մտահյուսվածքում։

Մինչսովետական շրջանում գրած իր աշխատություններում («Ստեփանոս Նազարյանց», «Գրիգոր Արծրունի») Լեոն նույնպես դրական էր գնահատում Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միակցման իրողությունը և գրվատանքի ջերմ խոսքեր ուղղում Ներսես Աշտարակեցուն։ «Ռուսաց զենքը ոչ միայն բերում էր խաղաղություն և հանգստություն, այլև կապող մի կամուրջ էր այնքան դժբախտություններ տեսած մեր երկրի և Եվրոպական քաղաքակրթության միջև։ Ռուսաստանի հովանավորության տակ մտած ժողովուրդները այլևս ոչ մի հոգս չէին կարող ունենալ, բացի մտավոր և կուլտուրական առաջադիմությունից»[28]։ Դժվար չէ գտնել ծայրը այն կարմիր թելի, որ կտրում անցնում էր հայ լիբերալ բուրժուական պատմագրության և հրապարակագրության բոլոր հյուսվածքների միջով՝ խաղաղ-տնտեսական կյանք և կուլտուրական ոգորումն։ Հայ լիբերալ բուրժուական պատմագրությունը չպա-

25 Բ ա ֆ ֆ ի, Գրականության մասին, Երևան, 1958, էջ 221։

26 Ստ. Ն ա զ ա ր յ ա ն ց, Երկեր, հ. Ա, Թիֆլիս, 1913, էջ 93։

27 Ա լ. Ե ր ի ց յ ա ն, Ամենայն Հայոց կաթողիկոսությունը և Կովկասի Հայքը 19-րդ դարում, հ. Ա, Թիֆլիս, 1894, էջ 308։

28 Լ ե ո, Ստեփանոս Նազարյանց, հ. Ա, Թիֆլիս, 1902, էջ 3։

տասխանեց, սակայն, այն հարցին, թե ինչո՞ւ Աշտարակեցին «ռուս զենքի գործը հեշտացնելու համար» այդքան «մեծ ծառայությունների փոխարեն հալածանքի ենթարկվեց Պասկևիչի կողմից», ինչո՞ւ Կովկասում նրա մնալը «ավելորդ էր ու վտանգավոր»։ 20-ական թվականներին Լեոն փորձեց պատասխանել այդ հարցին, բայց ծայրահեղությունները այլ ուղղություն տվին նրա գրչին։

Ընդհանրապես մինչսովետական պատմագրությունը հստակ չտվեց պատասխանն այն հարցի, թե ի՞նչ էին սպասում Ն. Աշտարակեցին և նրա ժամանակակից հայ գործիչները Ռուսաստանից և ինչ ստացան ցարիզմից։ Բանն այն է, որ Ներսեսի՝ ո՛չ մտերիմներին եղած նամակներում և ո՛չ էլ պաշտոնական գրագրություններում այդ մասին ոչինչ չի հիշատակվում։ Անհրաժեշտ նյութ չեն տրամադրում նաև մյուս պատմական վավերագրերը։ Պիտի ենթադրել, որ Ռուսաստանի հովանավորության ներքո ազատ ու ինքնավար Հայաստան փափագող XVIII դարի հայ ազատագրական շարժման գործիչների ծրագրերը, որոնք վճռական դեր էին խաղացել հայ ամենատարբեր դանգվածների մեջ ռուսասիրական զգացմունքներ պատվաստելուն, պատմական նոր պայմաններում շարունակում էր տակավին հույս ու հավատ ներարկել Ն. Աշտարակեցուն։ Մինչդեռ ժամանակը առաջադրում էր նոր խնդիրներ, Ռուսաստանի ներքին ու արտաքին քաղաքականությանը՝ նոր պահանջներ։ Տակավին 1801 թ., Ալեքսանդր Առաջինը Վրաստանի Ռուսաստանին միակցման հայտնի իր հրովարտակով հայերին ևս մի զգալի չափով տեսանելի դարձրեց ցարիզմի քաղաքականության գաղութային շրջազգեստի ներքին ծալքերը։ Փաստորեն այդ պահից մարում էր վրաց ժողովրդի ազատագրական շարժման խարույկը, թեկուզ հետո էլ հանգած մոխրակույտի առանձին մասերում մլմլում էր կրակը։

Վրաստանի թագավորությունը վերացնող ցարիզմը կարո՞ղ էր քառորդ դար հետո ազատություն և ինքնավարություն տալ հայերին, երբ Ռուսաստանի պատմության մեջ սկսվել էր ամենադաժան և երկարատև ռեակցիաներից մեկը, երբ անողոքաբար հալածվում էր ամեն մի ազատ միտք ու ժողովրդի լավագույն զավակները զրկված հայրենիքի բարօրության համար աշխատելու հնարավորությունից դատապարտված էին ավելորդ մարդիկ դառնալու ծանր ճակատագրին։ Հարկավ՝ ոչ։

Բացառված չէ, անշուշտ, որ առաջխաղացող ռուսական բանակներին հայերի օգնությունն ու աջակցությունն ապահովելու համար, ցարը կամ ցարի գիտությամբ Պասկևիչը հուսադրող խոստումներ տված լիներ Ն. Աշտարակեցուն։ Այդ մասին է խոսում ոչ անհայտ այն «թուղթը», որ այնքա՜ն խորհրդածությունների տեղիք է տվել պատմագիտությանը։

«Պատմում են,—գրում է Եղ. Գեղամյանը,—որ իբր Ներսես արքեպիսկոպոսը մինչև իր մահը ձախ գրպանում պահում էր մի թուղթ, որից գիշեր ու ցերեկ չէր բաժանվում։ Միաժամանակ ասում են, որ մասնավոր զրույցների ժամանակ ձախ ծոցի վրա էր դնում (պետք է լինի՝ ձախ ծոցի վրա էր դնում ձեռքը—Ն. Ս.) և ասում՝ ահա այստեղ է կաշկանդված Պասկևիչը։

Ենթադրում են, որ այդ թուղթը Պասկևիչն է տվել և նրանում մեծ խոստում է տվել հայոց ազգին»[29]։ Գեղամյանից շատ առաջ նույն միտքն էր

29 Եղ. Բ. Գեղամյան, Հայերի ազատագրական շարժումները ԺԹ դարում և հայկական հարցի չորրորդ շրջանը, Բաքու, 1915, էջ 185։

հայտնում Ներսեսին ժամանակամերձ Պերպերյանն իր «Հայոց պատմության» մեջ։ Եթե հայերը օգնություն և աջակցություն ցույց տային ռուսական բանակին՝ Երևանի և Նախիջևանի խանությունները պարսիկներից գրավելուն, ապա վերջում՝ այդ մարզերը հայտարարվելու էին անկախ։ «...Ի բռնակալութենե անօրեն խանիցն պարսից, և լինել ընդ հովանավորությամբ ամենաբարձր տերության ռուսաց»[30], Պերպերյանը գրում է, որ էջմիածնի կաթողիկոսական գահին բազմելուց առաջ Նիկոլայ Առաջինի հետ ունեցած զրույցի ժամանակ Ներսեսը կրկին խոսք բացեց այդ թղթի մասին. «Այս յետկար և ստորագրություն ձեր պահեալ կայ առ իս ո՛վ վեհափառ տէր, իբրեւ մասն սրբազան, և ոչ գիտեմ, թե ե՞րբ լինելոց է»[31]։ Մինչսովետական հայ պատմագրությունը չկարողացավ բացահայտել ռուս-պարսկական պատերազմից հետո Ա. Պասկևիչի և Ն. Աշտարակեցու միջև բորբոքված պայքարի էությունը։ Երկու ախոյանների փառասիրական հակումների մեջ որոնելով սկսված հակամարտի արմատները, Ալ. Երիցյանն անզոր գտնվեց նրանց լարված փոխհարաբերությունների ժխորում ունկնդրել ցարիզմի գաղութային քաղաքականության նվագի առաջին ձայնը։ Հեղինակը ոչ միայն չբացահայտեց Պասկևիչի և Աշտարակեցու միջև առաջ եկած լարված պայքարի «ինչ-ինչ պատճառների» հարցը, այլև լռությամբ անցավ Պասկևիչի՝ Ներսեսին մեկ ու կես ամիս ուշացումով գրած 1828 թ. նամակի հետևյալ տողերի կողքով. «Վերջապես չեմ հասկանում, թե ինչ պատճառով հայոց ազգին «որբացեալ» եք կոչում, քանի որ նա Ռուսաց կայսեր բարձր պաշտպանության տակ է»[32]։ Երիցյանը չկարողացավ տեսնել, որ Ներսեսը տրտնջում էր ռուսաց կայսրի հենց այդ «բարձր» պաշտպանության դեմ։ Հայտնի է, որ Արևելյան Հայաստանի ազատագրությունը «դարագլուխ ազատութեան և երանութեանց մերոց ապագայից»[33] դիտող Հ. Ալամդարյանը պատերազմից քիչ անց կգաց, որ իր ժողովրդի համար պակաս ծանր չեն և ցարիզմի շղթաները։ Ալամդարյանի սպասելիքները անհամեմատ գերազանցում էին ցարական, միապետական կարգի ընձեռած հնարավորությունները։ Եթե Աշտարակեցին, ճիշտ է դժվարությամբ, բայց այնուամենայնիվ կրեց իր սեփական փառքի ծանր լուծը, մինչդեռ Ալամդարյանը դարձավ իր վաստակի ոչ միայն հարկատուն, այլև գերին։ Եթե դեմոկրատ մտածողը չհաշտվեց նորեկ ռեժիմի հետ մինչ ի մահ, ապա Ն. Աշտարակեցին հայ ազգային ակնկալությունների խամրումից հետո ընտրեց կղերա-չինովնիկական միջավայրում առավել տաքուկ և բարձր դիրքի հասնելու ճանապարհը։ Սերտորեն դաշնակցելով հայ հարուստ հողատերերի ու ցարական բարձր պաշտոնեության հետ, Ն. Աշտարակեցին տիրապետող ռեժիմի մեջ տեսավ ազգի ներկան ու ապագան, դիմադիր կանգնեց ոչ միայն նորելուկ հայ ազգային-ազատագրական պայքարին, այլև լուսավորական-դեմոկրատական շարժմանը։ XIX դ. վերջի բուրժուական հայ տնտեսագետներից մեկը՝ Ավ. Արասխանյանցը ոչ առանց հիմքի ենթադրում էր, թե «շատ կարելի է, որ Ներսես 5-ը խիստ ձգտած լինի մի բան էլ շահել հայության համար, յուր ազդեցությունը գործ դնելով, որ շատ տեղ հայերը հին ազնվականների սերունդ ճանաչվեն կառավարությունից և նոցա վերա էլ հողեր հաստատվեն, թեկուզ ի վնաս գյուղական

30 Ա. Պերպերյան, Պատմութիւն հայոց, Կ. Պոլիս, 1871, էջ 178։

31 Նույն տեղում, էջ 283։

32 Ալ. Երիցյան, Ամենայն հայոց կաթողիկոսությունը և Կովկասի հայք 19-րդ դարում, մասն Ա, Թիֆլիս, 1894, էջ 157։

33 Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 55, վավ. 208։

դասակարգի»[34]։ Հավանաբար Ներսեսի գործունեության այս կողմը նկատի ուներ Ղ. Աղայանը, երբ գրում էր, թե՝ «նա ուսումնասեր մարդ չէր, այլ իշխանասեր. սիրում էր իշխել, տիրել, և այսքան միայն։ Նրա մեջ իշխում էր իր ժամանակի թավադների ոգին, իշխանների ոգին, նրանցից մի մազի չափ բարձր չէր»[35]։

Ղ. Աղայանի գնահատականը գերազանցապես կարելի է տարածել Աշտարակեցու գործունեության երկրորդ էտապի վրա, երբ ռուս-պարսկական պատերազմից հետո, ցարիզմի և նրա բարձր պաշտոնեության կամքով Բեսարաբիա արտաքսված տարաբախտ ժողովրդի օտարական զավակը բռնեց նորեկ ռեժիմի պայմաններում հաշտ ու խաղաղ ապրելու ճանապարհը։ 1832 թ. փետրվարի 27-ի հայտնի նամակում Աշտարակեցին համոզում էր Շերմազան Վարդանյանին և իր մյուս մերձակիցներին, որ այժմ իմաստազուրկ են հայկական ինքնավարության ձիգերը։ Նա մեկընդմիշտ լուծված էր համարում արևելահայերի հարցը՝ փշրված ակնկալությունները, դատարկ և ավելորդ՝ նոր աղերսները։ Ներսեսը գտնում էր, որ լեհական ապստամբությունը արյան մեջ խեղդող ցարիզմը կարող էր հայերի նկատմամբ ևս կատարել նույնը, եթե նրանք չկարողանան ճանաչել «զզօրութիւնս թևաց իւրեանց»[36]։

Ճիշտ է, Սերովբե արքեպիսկոպոսի նման[37] Աշտարակեցին պաշտպան չկանգնեց ցարիզմի լեհական դաժանություններին, բայց միաժամանակ հայերի համար ուսանելի ոչինչ չտեսավ լեհ ապստամբների մոտ։ Հայերը նշված ուղիով չպիտի գնան, այն կործանարար է։ Ներսեսը հրաժարվում էր ոչ միայն ցարիզմի դեմ կռվելուց (մի բան, որին նա ամենևին էլ պատրաստ չէր), այլև վերջինիս հետ բանակցելու նպատակահարմարությունից՝ «մեծ լռության» մեջ տեսնելով առօրյայի իմաստն ու ոգին։ Նոր կարգերի հետ կղերա-աղայական հոսանքը հաշտվողականությամբ էր համակված ընդհանրապես։ Տակավին 1829 թ. սեպտեմբերի 27-ի թվակիր տեղեկագրում մեկ-մեկ նշելով Կովկասի կառավարչության հայահալած քաղաքականությունը, ցարական կառավարությունից չափավոր պահանջներ հայցող տեղեկագրի հեղինակները երկյուղ էին հայտնում, որ առանձին վրդովեցուցիչ դեպքերը կարող են հասցնել ապրստամբության։ Մտքերը խաղաղացնելու համար նրանք կտրականապես առաջարկում էին՝ քաղաքացիական և զինվորական իշխանություններին չմիջամտել հոգևոր գործերին, Աշտարակեցուն հրավիրել մայրաքաղաք խորհրդակցելու Հայկական մարզի կառավարման գործի մասին և նշանակել նրան կաթողիկոս, Սերովբե վարդապետին խառնակչության համար հեռացնել Կովկասից և աքսորել Գրիգորիոպոլ կամ Քիշինև, պարտագրել Պասկևիչին լավ հարաբերություններ պահպանել Աշտարակեցու հետ[38]։ Անդրադառնալով այս անցքերին՝ Ալ. Երիցյանը դժկամության ոչ մի խոսք չի ուղղում ցարիզմի գաղութային քաղաքականության հասցեին։

---

34 Ա վ. Ա ր ա ս խ ա ն յ ա ն ց, Հողային խնդիրը Անդրկովկասում, «Մուրճ», 1893, № 4, էջ 505։

35 Ղ. Ա ղ ա յ ա ն, Երկեր, հ. Գ, Երևան, 1940, էջ 204։

36 Ալ. Ե ր ի ց յ ա ն, Ամենայն հայոց կաթողիկոսությունը և Կովկասի հայք 19-րդ դարում, մաս 2, Թիֆլիս, 1894, էջ 152։

37 1831 թ. հոկտեմբերի 14-ին Սերովբեն շնորհավորում է Պասկևիչի կնոջը՝ կոմսի ղեկավարությամբ լեհական ապստամբությունը ճնշելու և նրան Վարշավայի իշխան կոչումն շնորհելու առթիվ (տե՛ս Կաթողիկոսական դիվան, թղթ. 71, վավ. 276)։

38 Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 63, վավ. 361։

Անդրկովկասի և Թուրքիայի տնտեսական, քաղաքական և առհասարակ պատմական բնականոն զարգացման պահանջներն ու պայմանները Երիցյանը մի կողմ էր վանում և այդ բոլորի փոխարեն դուռ բացում հեղհեղուկ տեսակետների առաջ։ Իդեալիստական պատմահայեցողությունը թույլ չտվեց նրան վերլուծական մտքի խորը պեղումներ կատարել, ուստի հարկադրյալ նա մերթ ձեռք էր մեկնում նիրհող ազգային պահպանողականությանը, մերթ տարուբերվող լիբերալիզմին։

Երիցյանը չէր ժխտում, որ ռուսական տիրապետությունը հնարավորություն ընձեռեց վաշխառուական կապիտալի մեկուսացմանն և առևտրական կապիտալի ներմուծմանն ու բարգավաճմանը։ Սակայն շատ ավելի լավ կլիներ,—ավելացնում էր նա, եթե ռուսական տիրապետությունը դասակարգային տեղաշարժեր առաջ չբերեր Անդրկովկասում և Հայաստանում, չանբարոյականացներ «նահապետական համեստությամբ ապրող հայերին» և կոտրեր «ազգիս անունը օտարների առաջ»[39]։

Եթե Աշտարակեցին «հասկանում էր նոր սաղմնավորվող կապիտալիստական արդյունաբերության կարևորությունը և յուրովի ընդառաջում դրան»[40], ապա նրա կյանքի պատմագրող Ալ. Երիցյանը չկարողացավ տեսնել, որ կովկասահայերի համար այդ «կեղծ լուսավորությունը» նոր դարաշրջան էր բացում, առաջ բերում նոր պահանջներ ու կարիքներ, նպաստում պրոգրեսիվ հասարակաշերտերի առաջացմանը։

Այսպիսով, դժվար չէ նկատել, որ հայ ժողովրդի նոր պատմության բուրժուական մշակներից նույնիսկ ամենատաղանդավորները սոսկ ներբողել կամ կշտամբել են Աշտարակեցուն։ Նրա ստույգ տեղը արևելահայերի կեսդարյա զարգացման ընդհանուր պրոցեսի մեջ, հայ բուրժուական պատմագրությունը չկարողացավ ճիշտ հասկանալ ու մեկնաբանել։

Այդ տեսակետից ուշագրավ է Լեոն։

Կյանքի վերջին շրջանում նրա հայտնած բացասական բոլոր արտահայտությունների էությունը կարելի է բանաձևել այսպես՝ ցարիզմը չկատարեց հայերին տված իր խոստումները։ Մերկացումների առարկան և հարվածների ենթական Լեոյի մոտ ամենից առաջ և բոլորից շատ ցարիզմն էր՝ վերջինիս երկդիմի քաղաքականությունը, բայց Լեոն երբեմն ավելի շատ մեղադրում. բան բացատրում ու բացահայտում էր իր մեղադրանքների հիմքերն ու պատճառները։

Լեոն բացարձակ բար էր նետում ցարիզմի երեսին՝ չզատորոշելով Անդրկովկասը նվաճող ճորտատերերի ու վաճառականության շահերի պաշտպան ցարիզմը՝ նույն ցարիզմի կողմից ստրկացված ռուս ժողովրդից։ Ռուսական ցարիզմին ու նրա բյուրոկրատիային մեղադրելով հայերի քաղաքական ակնկալությունների կործանման մեջ, Լեոն ռուս ցարերի արտաքին քաղաքական խարդավանքներին աշխատում էր մեղսակից դարձնել նաև հայ ազատագրական շարժման գործիչներին, որոնց թվում և Աշտարակեցուն[41]։

---

39 Ալ. Երիցյան, Ամենայն հայոց կաթողիկոսությունը և Կովկասի հայք 19-րդ դարում, Թիֆլիս, 1894, մ. Ա, էջ 444—445։

40 Աշ. Հովհաննիսյան, Նալբանդյանը և նրա ժամանակը, Երևան, 1955, գիրք 1, էջ 44։

41 Լեո, Հայոց պատմություն, նորագույն շրջան, Երևան, 1927, էջ 126։

Գիտական ճիշտ մեթոդոլոգիայով հասակ առնող սովետահայ պատմագրությունը, արդարև, չէր կարող հաշտվել Լեոյի այս և բազմաթիվ նման սխալ տեսակետների հետ։ Տակավին 30-ական թվականների սկզբին Լեոյին դիմակայող Երվանդ Շահազիզը գրում էր, որ «Ներսես Աշտարակեցու և դրա բազմաթիվ համախոհների ու գործակիցների երազներն հօդս են ցնդել և անթիվ, անհամար հայ նահատակների արյունը ունպետս թափվելո»[42], նշանավոր բանասերը անվերապահորեն մերժում էր, սակայն, Լեոյի ինչպես նախասովետական շրջանի ցարիզմի անվերապահ ներբողը, այնպես էլ կյանքի վերջին տարիներին թունոտ պարսավանքը, գտնելով, որ երկու դեպքում էլ բացակայում է պատմականությունն ու գիտական դետերմինիզմը։ Երվանդ Շահազիզը ցարիզմի՝ հայ ժողովրդի հասցրած վնասից զատ, առավել բաժին էր հանում ռուսական տիրապետության բերած դրական հետևանքներին, քանզի հայերը «...մեծամեծ նյութական և բարոյական նեղություններ ու զրկանքներ կրելով հանդերձ ռուսներից,—գրում է նա,—մի բռնապետական ռեժիմը փոխելով մյուսին, գոհ են եղել, որ համեմատաբար, գոնե, մի որոշ չափով հանգստություն են գտել և վայելել անձի և գույքի ապահովություն ռուսական նորահաստատ իշխանության ներքո»[43]։

20—30-ական թվականներին Արևելյան Հայաստանի Ռուսաստանին միացման հարցի շուրջը ստեղծված պատմագիտական գրականության մի մասի մեջ զարգացվեց ճիշտ այն տեսակետը, որ Անդրկովկասը և Հայաստանը միակցելուց հետո ցարիզմը նորանվաճ այդ երկրամասերը բերեց ֆեոդալա-ճորտատիրական սիստեմից բխող որոշ անխուսափելի չարիքներ, բայց Ռուսաստանը նոր կցված երկրամասերում միաժամանակ կոեց ու կոփեց այն գենքերը, որոնք վերացնելու էին ցարիզմի բերած չարիքները՝ ուղի հարթելով այնտեղ ապրող ազգերի ազատ առաջադիմության համար[44]։

Սովետահայ պատմագիտությունը գիտական-քննադատական ընդդծված վերաբերմունք էր հանդես բերում հեռավոր ու մերձավոր անցյալի բազմաթիվ կողմերի հանդեպ։ Սակայն անցյալի հավասարակշռված և հանգիստ քննությանը շուտով փոխարինելու եկավ տագնապահարույց կամայականությունը։ Անհատի պաշտպամունքի իրադրության պայմաններում քմահաճորեն սևացվում կամ նսեմացվում էին հայ ժողովրդի պատմության շատ դրվագներ։ Նման պայմաններում եթե Արևելյան Հայաստանի Ռուսաստանին միակցման պրոբլեմի լուսաբանման գործում սովետահայ պատմագրությունը որոշ չափով առաջընթաց ապրեց, տարաբախտաբար, նույն պատմագիտական դրականության էջերից աննշան բաժին հանվեց ժամանակի ազատագրական շարժման գործիչներին։ Գրեթե «արգելված գոտու» մեջ էր առնվել նաև Ն. Աշտարակեցին։ Հեղինակները նրա անունը կամ չէին հիշատակում, կամ հարևանցիորեն ակնարկում էին, լավագույն դեպքում ցույց տալու համար, որ չեն ապերում պատմական իրականությունը։ «Ն. Աշտարակեցու վերաբերմունքը դեպի Ռուսաստանը,—գրում է պրոֆ. Պարսամյանը,—և առհասարակ նրա երկարատև

42 Ե. Շահազիզ. Հին Երևանն, Երևան, 1931, էջ 233։

43 Նույն տեղում։

44 Колониальная политика царизма в Азербайджане. Москва, 1936; М. Н. Покровский. Дипломатия и войны царской России в XIX столетии, Москва, 1923.

Աշ. Հովհաննիսյան, Արովյան, Երևան, 1933։ Վ. Պարսամյան, Ցարիզմի գաղութային քաղաքականությունը Հայաստանում, Երևան, 1940, և այլն։

քաղաքական գործունեությունը պատմական տարբեր շրջաններում տարբեր արտահայտություն է ունեցել։ Ուստի, անհրաժեշտ է պատմական կոնկրետ մոտեցում ունենալ նրա գործունեությանը, քանի որ միայն այդ ճանապարհով կարելի է ճիշտ կերպով գնահատել այն, ցույց տալ նրա դրական և բացասական կողմերը»[45]։ Սա միանգամայն ճիշտ տեսակետ է, սակայն հայ-ռուսական հարաբերությունների պրոբլեմով զբաղվող սովետահայ պատմաբանները, ցավոք, առանձին պատմա-քննական հետազոտության նյութ չդարձրին ազգային-քաղաքական ուրույն հայացքների և ձգտումների տեր այդ գործչի հակասական գործունեությունը։ Իսկապես լիահնչյուն ու գիտական կարելի է համարել Ն. Աշտարակեցու գործունեության այն գնահատականը, որ տրված է «Նալբանդյանը և նրա ժամանակը» աշխատության հեղինակի կողմից։ Գտնելով, որ առանց XIX դարի առաջին կեսի անդրկովկասյան իրականության սոցիալական ու քաղաքական կյանքի շատ երևույթների բացահայտման, պատմական բազմաթիվ հանգույցներ ու զանազան շահախնդրական ծալքեր պարզելու անհնար է ճիշտ արժեքավորել ժամանակի գործիչներին։ Ն. Աշտարակեցու քաղաքական գործունեությունը գնահատելիս Աշ. Հովհաննիսյանին չհրապուրեցին ոչ մինչսովետական պատմագրության մեջ Ներսեսի կենսագրության վիպականացված ընթացքը, ոչ էլ սովետահայ պատմագրության մեջ հայտնված մի քանի նիհար սխեմաները։ Ըստ նրա, գիտական պատմագրությունը չպիտի ուրանա ինչպես մահմեդական լծից հայրենիքի ազատագրման գործում Աշտարակեցու «վաղեմի ծառայությունները», այնպես էլ Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միակցվելուց հետո նրա «քաղաքականության կղերա-ֆեոդալական նեղմտությունն ու սահմանափակվածությունը»[46]։

Հայ ժողովրդի քաղաքական կողմնորոշման և նրա մղած ազատագրական պայքարի, ժամանակաշրջանի դասակարգային կոնտրաստների, հասարակաշերտերի ու հասարակական հոսանքների հոգեբանության մարքսիստական վերլուծման հետնախորքի վրա է հեղինակը առաջարկում Ն. Աշտարակեցու գործունեությունը ճիշտ հասկանալու բանալին։

Այսպիսով, սովետահայ պատմագրության խնդիրն է հաղթահարել մինչհեղափոխական հայ պատմագրության մեջ Ն. Աշտարակեցու գործունեության գնահատման միակողմանիությունը, վեր հանել նրա գործունեության դրական ու բացասական կողմերը, պատմական զարգացման ընդհանուր պրոցեսի մեջ ցույց տալ նրա իսկական տեղը։

Միաժամանակ պատմագրության մեջ Ն. Աշտարակեցու գործունեության արժեքավորման հարցի ուսումնասիրությունը բերում է այն եզրակացության, որ առանց նրա կյանքի ու գործունեության պատմա-քննական հատուկ հետազոտման անհնար է գիտականորեն պատասխանել XIX դարի հայ ժողովրդի պատմության որոշ հարցերին։

---

45 Վ. Պարսամյան, Գրիբոեդովը և հայ-ռուսական հարաբերությունները, Երևան, 1947, էջ 11։

46 Աշ. Հովհաննիսյան, Նալբանդյանը և նրա ժամանակը, գիրք առաջին, Երևան, 1955, էջ 42—44։ Նույն հեղինակի հոդվածը «Պատմա-բանասիրական հանդես»-ի 1965 թ. № 4-ում։